վերք Ս. Աստվածածին եկեղեցում, այցելեցին թեմի ընկերային կենտրոն՝ ծանոթանալով թեմից ներս իրականացվող հոգևոր կրթա-դաստիարակչական, ընկերային և հովվական գործունեությանը:

Սեպտեմբերի 19-ին Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակները Միածնաէջ Մայր Տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը, ապա հյուրընկալվեցին Խոր Վիրապի վանքում, ուր վանահայր Տ. Նարեկ աբեղա Ավագյանը ներկայացրեց վանքի պատմությունը և ներկայիս գործունեությունը:

Նույն օրը պատվիրակությունն այցելեց Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց, ուր ճեմարանականները հանդես եկան հոգևոր և ազգային երգերի կատարմամբ: Ուսանողներին հոգևոր իր պատգամը բերեց պատվիրակության ղեկավար Տ. Լազար եպիսկոպոս Գուրկինը: Հյուրերը նաև ներկա գտնվեցին երեկոյան ժամերգությանը:

Սեպտեմբերի 21-ին Խորհրդի անդամները Մայր Տաճարում ներկա գտնվեցին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով կատարվող Հանրապետական մաղթանքի արարողությանը, որ հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նույն օրը պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, այցելեց Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցի՝ մասնակցելու Սրբազան պատարագին:

Ապա Խորհրդի անդամները մեկնեցին Արագածոտնի թեմ, ուր այցելեցին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի և աղոթեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի առջև: Պատվիրակները հյուրընկալվեցին նաև առաջնորդարանին կից գործող դպրատանը, դիտեցին երիտասարդաց միության անդամների նկարները:

Պատվիրակությանը ներկայացվեց նաև թեմի հոգևոր և շինարարական գործունեությունը և ապագայի հեռանկարները: Խորհրդի անդամներն առիթ ունեցան այցելելու Արագածոտնի թեմի պատմական վանքերն ու եկեղեցիները:

Սեպտեմբերի 22-ին Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությունն ավարտեց պաշտոնական իր այցը Հայաստան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԷՍՏՈՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությանը՝ գլխավորությամբ Նառվակի եպիսկոպոս Լազար Գուրկինի և ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Լազար եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը Հայաստան

այցելելու հրավերի, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր կյանքին և գործունեությանը ծանոթանալու հնարավորության ընձեռման համար: Լազար Սրբազանը ներկայացրեց Խորհրդի անդամների տպավորությունները այցից, ապա ընթերցվեց Էստոնիայի Եկեղեցիների խորհրդի նախագահ Իններոնա արքեպիսկոպոսի ուղերձը:

Այնուհետև պատվիրակության անդամներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով խորհրդի անդամների այցի առիթով: Նորին Սրբությունը ներկայացրեց Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական դաստիարակության և ընկերային ծառայության ոլորտներում, անդրադարձավ նաև հոգևորականների պատրաստության խնդրին՝ գոհունակությամբ փեղեկացնելով, որ առաջիկայում կսկսի գործել երրորդ կրթական հոգևոր հաստատությունը՝ Հառիճավանքի դպրանոցը:

Հանդիպմանը խոսվեց վանական կյանքի կարևորության և դրա վերականգնման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին: Հյուրերին ներկայացվեց նաև այն հսկայածավալ աշխատանքը, որ իրականացվում է սրբավայրերի պահպանության, նոր եկեղեցիների կառուցման, Մայր Աթոռի բարեկարգման համար: Անդրադարձ կատարվեց Էստոնիայում հայկական եկեղեցու գործունեությանը, հայ համայնքին, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերություններին Քույր Եկեղեցիների հետ:

МАЙР АТОРИ ... 

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՎԱՐՏՎԵՑ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 21-ին Խորհրդի անդամները Մայր Տաճարում ներկա գտնվեցին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով կատարվող Հանրապետական մաղթանքի արարողությանը, որ հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նույն օրը պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, այցելեց Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցի՝ մասնակցելու Սրբազան պատարագին:

Ապա Խորհրդի անդամները մեկնեցին Արագածոտնի թեմ, ուր այցելեցին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի և աղոթեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի առջև: Պատվիրակները հյուրընկալվեցին նաև առաջնորդարանին կից գործող դպրատանը, դիտեցին երիտասարդաց միության անդամների նկարները:

Պատվիրակությանը ներկայացվեց նաև թեմի հոգևոր և շինարարական գործունեությունը և ապագայի հեռանկարները: Խորհրդի անդամներն առիթ ունեցան այցելելու Արագածոտնի թեմի պատմական վանքերն ու եկեղեցիները:

Սեպտեմբերի 22-ին Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությունն ավարտեց պաշտոնական իր այցը Հայաստան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ